

ԱՆԴՐԱԴԱՐԶ ԵՎ ՄԻՋԻՆ ԿՐԱՎՈՐԱԿԱՆԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԵՎ ՀԱՐԱՎՅՈՒՄԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՎՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳԵՐՄԱՆԵՐԵՆՈՒՄ

Գերմաներենի անդրադարձ համակարգի հիմքում ընկած են համապատասխան կառույցներն ու բայերը: Նման կառույցներում հանդես եկող բայերը նախկինում համարվել են կեղծ անդրադարձ բայեր, որոնցում անդրադարձ դերանունը հանդես է գալիս որպես ուղիղ խնդիր և կարող է փոխարինվել մեկ այլ գոյականով կամ դերանունով՝ (*Er wäscht sich, er wäscht seine Schwester, er wäscht sie*), իսկ անդրադարձ բայերը համարվել են իրական, ոչ կեղծ, որոնց դերանունը հանդիսանում է ստորոգյալի բաղկացուցիչ մասը՝ առանց անդրադարձ իմաստի:

Անդրադարձություն ցույց տվող անցողական բայերն որպես կանոն գերմաներենում ունեն հարակրկնական *sich* անդրադարձ դերանուն (AS), որտեղ այն ենթադրում է հարց, փոխարինվում է մեկ այլ անվանական կապակցությամբ, ընդ որում շեշտվում է և նախադասության մեջ հանդես է գալիս որպես լրացում: Օրինակ՝

(1) *Paul wäscht sich.* (հարակրկնական անդր. դերանուն)

Ի տարբերություն հարակրկնականների, անտրոհելի անդրադարձ բայերի անդրադարձ դերանունը (*Inhärent reflexive Verben*) հարց չի ենթադրում, չի փոխարինվում մեկ ուրիշ անվանական կապակցությամբ և չի շեշտվում: Վերջինս լրացման տեղ չի զբաղեցնում, այլ համարվում է որպես բայի անբաժան մաս: Դերանվան այս տիպը գերմանագիտության մեջ անվանում են բառական անդրադարձ դերանուն (*lexikalisches Reflexivpronomen, L-S*): Օրինակ՝

(2) *Paul schämt sich.*

Այս ենթախմբին պատկանում են նաև *sich schämen, sich ausruhen, sich zieren, sich streiten, sich berufen auf* և այլ բայերը:

Գերմանագետներից Վիլմոս Ագելն այս բայերը դասում է և՛ անդրադարձ, և՛ միջին (*mediale Verben*) բայերի խմբին: Ըստ նրա միջին կառույցներում համապատասխան ներգործական նախադասության հայցական հոլովով խնդիրը հանդես է գալիս ենթակայի դերում, պարագայական լրացումը պարտադիր է, իսկ *sich* անդրադարձ դերանունը միջին կառույցի նշույթն է: Միջին կառույցներում *sich*-ը համարվում է միջին անդրադարձ դերանուն (*M-S*):

Ներկայումս առանձին գերմանագետների կողմից խորապես ուսումնասիրվում են նաև «միջին բայերն» (*mediale Verben*), որոնք իմաստով կրավորական են, ձևով՝ անդրադարձ, իսկ նրանցով կազմվող կառույցներում պարագայական լրացումը բացակայում է: Օրինակ՝

(3) *Dieses Buch liest sich leicht.* →

Dieses Buch wird von jemandem gelesen.

¹ V Agel, Reflexiv-Passiv, das im Deutschen keines ist. Überlegungen zu Reflexivität, Medialität, Passiv und Subjekt. In: Sprache im Fokus, Tübingen, 1979 S. 147.

- (4) *Diese Tasche trägt sich schwer. →
Diese Tasche wird von jemandem getragen.*

- (5) *Die Tür öffnet sich. →
Die Tür wird von jemandem geöffnet.*

Միջին անդրադարձ դերանվանք բայերն ունակ չեն կազմելու կրավորական կառույց: Դրանք այն բայերն են, որոնց անդրադարձ դերանունը կամ հարակրկնական է, կամ բառային: Ինչ վերաբերում է նախադասության ենթակային, ապա նման կառույցներում տրամաբանական ենթակայի դերում նախադասության իրական խնդիրն է հանդես գալիս, որի պատճառով էլ միջին բայերը գերմանագիտության մեջ ընդունված է անվանել ներգործվող խնդրի հոլով բայեր:

Ավանդական քերականության համաձայն գերմաներենում անդրադարձ բայերն ունակ չեն կազմելու կրավորական, սակայն արդի գերմանագիտության մեջ վերջերս առանձին բնանրկման թեմա է դարձել անդրադարձ կրավորականը՝ *Reflexivpassiv*²:

Ընդհանրապես քերականների կարծիքներն այս խնդրի վերաբերյալ խիստ հակասական են: Առավելապես գերիշխում է այն տեսակետը, որ խնդիրը անտեսվում է սակավ կիրառություն ունենալու պատճառով: Այնինչ Բրինկերը գտնում է, որ ներկայումս անդրադարձ կրավորականի կիրառության սահմաններն ավելի ընդլայնվել են: Նա նշում է, որ եթե նախկինում այն օգտագործվում էր առավելապես խոսակցական լեզվում, ապա այժմ անդրադարձ կրավորականի ձևեր կարելի է հանդիպել նաև գրավոր լեզվում, գիտական գրականության մեջ, մամուլում:

Գարկ է նշել նաև, որ շատ գերմանագետներ լիովին անտեսում են անդրադարձ կրավորականը՝ հակված լինելով նորմատիվ քերականության սկզբունքներին:

Քերականներ Վայնրիխը և Դուդենը նույնպես անդրադարձել են այս երևույթին, սակայն միայն պարզմատիկ և լեզվի խոսակցական տարբերակի տեսանկյունից՝ պնդելով որ անդրադարձ կրավորականով նախադասություններն արտահայտում են խիստ հրատապ հրաման և բնորոշ են միայն խոսակցական լեզվին: Օրինակ

- (6) *Hier wird sich täglich gewaschen! Das ist ein Befehl.*

- (7) *Wann wird sich endlich mal gekämmt?*

Իսկ շարահյուսական տեսանկյունից անդրադարձ կրավորականի թույլատրելիությունն ու անթույլատրելիությունը կայանում են առավելապես անտրոհելի անդրադարձ և իրական անդրադարձ բայերի մեջ, որտեղ առաջինները խնդիր չեն առաջացնում, ինչպես՝

- (8) *Das wurde sich zurecht geschämt / geschlagen.*

Իսկ երկրորդների դեպքում անդրադարձ դերանունն ունի լրացման կարգավիճակ, և այդ պատճառով էլ դրանք ունակ չեն կազմելու անդրադարձ կրավորական:

Այս կապակցությամբ նշենք, որ իրական անդրադարձ բայերով (*echte reflexive Verben*) կրավորական կազմելն իրոք խնդիր է առաջացնում, քանի որ այդ բայերի անդրադարձ դերանունը նախադասության անդամ չի համդիսանում:

² Յու. Գաբրիելյան, Գերմաներեն լեզվի տիպաբանություն, Երևան, 2006, էջ 80:

Sich անդրադարձ դերանունը անդրադարձ կրավորականում շարահյուսորեն վերլուծելի չէ և իմաստաբանորեն էլ չի վերահսկվում, սակայն երևույթը հնարավոր է դառնում միայն տրամաբանական զեղչված ենթակայի վերականգման օգնությամբ:

(9) *Von dem Mädchen wird sich gewaschen.*

Միջին կառույցներում, ինչպես

(10) *Dieses Buch liest sich leicht:*

եվ հատկանշական է, որ *sich* անդրադարձ դերանունը շարահյուսորեն չի վերահսկվում, դրա շնորհիվ պարզապես ունենում ենք «միջին կառույց»:

Ավելի բարդ է բառային դերանվան խնդիրը, որի դեպքում հարց է առաջանում, արդյոք այն ունի՞ ընդհանրապես լրացման կարգավիճակ, թե՞ ոչ: Այդպիսի բայերի դեպքում վերջինս բայի անբաժան մասն է համարվում, ինչպես օրինակ բաժանվող նախածանցավոր բայերի դեպքում (*einsteigen*, *ansagen*), հետևաբար այն բառային շրջանակներում լրացման դիրքում հանդես չի գալիս:

Իհարկե, հաշվի առնելով գերմանագետների իրարամերժ տեսակետները այս հարցի վերաբերյալ, ինչպես նաև կատարելով շարահյուսական վերլուծություն, կարելի է եզրակացնել, որ անդրադարձ կրավորական կառույցի և միջին կառույցի *sich* անդրադարձ դերանունները նման են միմյանց: Հմմտ.

(11) *Hier wird sich geärgert.*

(12) *Das Buch liest sich leicht.*

Ի տարբերություն բառային անդրադարձ դերանվան, միջին անդրադարձ դերանունը համապատասխան ներգործական նախադասության մեջ բացակայում է: Հմմտ.՝

(13) *Er liest das Buch* → *Das Buch liest sich leicht.*

(14) *Er amüsiert sich.* → *Hier wird sich amüsiert.*

Գերմանագետ Վիլմոս Ագելը առաջ է քաշում «միջին կրավորական» (*Medio-Passiv*) հասկացությունը՝ տարանջատելով անդրադարձ կրավորականից: Նա տարբերում է միջին սեռին պատկանող և անդրադարձ սեռին պատկանող բայեր: Ըստ նրա *sich waschen* բայը միջին բայ է (*Mittelverb*), իսկ Մարկուս Հունդը բնութագրում է այն որպես անդրադարձ կիրառվող անցողական բայ:

Այն բոլոր բայերը, որոնք ավանդաբար համարվում են անտրոհելի կամ իրական անդրադարձ բայեր, Վիլմոս Ագելը տալիս է «միջին բայեր» անվանումը: Դիտարկելով միջին և անդրադարձ կառույցները նշենք, որ միջին կառույցներում իմաստային դերի վերաբերական զուգորդմանը միանում է նաև կառուցվածքայինը: Միջին բայերի անդրադարձ *sich* դերանունը գործակցին բնորոշ դեր չունի, այն ուղղակի ծուլվում է ենթակայի հետ³:

Այսպիսով, այն գերակշռող միջին բայերը, որոնցով կարելի է կազմել անդրադարձ կրավորական, Ագելը առաջարկում է անվանել «միջին կրավորական»՝ անդրադարձ կրավորականի փոխարեն: Ընդ որում կրավորականի բաղկացուցիչ հատկանիշը ենթակայի կենտրոնախոյս լինելն է, մինչդեռ գործողության կրողի կենտրոնածիվ լինելը բնորոշ է կրավորականին՝ որպես կրավորականի բաղկացուցիչ:

3 Eisenberg, Peter: Grundriß der deutschen Grammatik, Band 2: der Satz, Stuttgart/ Weimar, S. 123–130.

Միջին կրավորական ունակ են կազմել այն բայերը, որոնք հարաբերակա-
նորեն գործող անձ են մատնանշում միաժամանակ, հարաբերականորեն ոչ
անցողական կառույցներում, (*Man wäscht sich hier täglich*), որտեղ անդրադարձ
դերանունն ունի նույն գործառույթը, ինչ միջին սեռի ներգործական նախադա-
սության մեջ, և որտեղ *sich* դերանունը միջին կառույցի ցուցիչն է համարվում:

Հատկանշական է այն, որ միջին կառույցներում անդրադարձ դերանվան
բնորոշ առանձնահատկությունը կայանում է գործող անձի քողարկվածության
մեջ, այսինքն՝ վերջինս նախադասության մեջ (շարահյուստներն) գոյություն չու-
նի, սակայն իմաստի տեսակետից առկա է:

Միջին կառույցներում կարևորում ենք դրանց դասակարգումը ներգործա-
կանի և կրավորականի միջև, ինչպես նաև անդրադարձ դերանվան գործա-
ռույթը: Իսկ անդրադարձ կրավորական կառույցներում առաջ ենք բաշում մի-
այն կառուցվածքային կազմությունը *werden* բայով՝ որպես ամանցողական
բայերի անդեն կրավորականի համաբանություն և անդրադարձ դերանվան
կիրառությունը՝ առանց վերջինիս գործառույթի:

Անդրադարձ կրավորականը կազմվում է անանցողական բայերի անդեն
կրավորականի նման (անտրոհելի անդրադարձ բայերը առանց շարահյուսա-
կան վերլուծության, իսկ հարակրկնական անդրադարձ բայերը հայցական հո-
լովով՝ շարահյուսական վերլուծությամբ):

Անտրոհելի անդրադարձ բայերի դեպքում, ինչպես *sich schämen* անդրա-
դարձ դերանունը համարվում է արդեն բայի անբաժան բաղադրիչը և դրանով
իսկ հայցական հոլովով խնդիր:

Այդ պատճառով այդ բայերով հնարավոր է լինում կազմելու բոլոր այն շա-
րահյուսական կառույցները, որոնք ի վիճակի են կազմելու ամանցողական
բայերը, ինչպես նաև անդեն կրավորական կառույցներ՝ անդրադարձ կրավո-
րականի ձևով:

Es wird + sich + Gen. /Dat. / Prap. Obj. / Adj. + Partizip II:

Schminken բայը անցողական է, իսկ հարակրկնական անդրադարձ դերա-
նունը ներգործական կառույցում զբաղեցնում է հայցական հոլովով խնդրի դե-
րը: Նշենք, որ հարակրկնական և բառային անդրադարձ դերանունների միջև
գոյություն ունեն անցումներ: Հարց է առաջանում, արդյո՞ք այս դեպքում անդ-
րադարձ դերանունն ունի դեռևս լրացման կարգավիճակ, թե՞ արդեն դիտվում
է որպես բայի անբաժան մաս:

(15) *Maria wendet sich dem Geliebten zu.* (Տրական հոլովով խնդիր)

(16) *Maria versichert sich der Erfolge.* (Սեռական հոլովով խնդիր)

(17) *Maria beschäftigt sich mit den Problemen.* (Կապական խնդիր)

Շարահյուսական վերլուծությամբ բերված օրինակներում նկատում ենք,
որ հարակրկնական *sich* դերանվամբ բայերը փոխարինվում են բառային *sich*
դերանվամբ բայերի: Ներգործական նախադասության իրական անդրադարձ
դերանունը կրավորականում դառնում է անտրոհելի անդրադարձ բայ, դրա-
նով էլ կրավորականում անդրադարձ դերանունը կորցնում է իր լրացման կար-
գավիճակը: Հարակրկնական հայցական հոլովով անդրադարձ բայերը անցո-

* Kunze J.: Typen der reflexiven Verbverwendung. In: Zeitschrift für Sprachwissenschaft, 16, 1997, S. 83.

դական են, որոնք կրավորականում հանդես են գալիս որպես անանցողական: Այս բայերի անդրադարձ դերանունը կրավորական նախադասության մեջ, ի տարբերություն ներգործականի, այլ գործառույթ ունի: Ներգործական նախադասությունում անդրադարձ դերանունը բայի լրացումն է, որը վերաբերում է ենթակային: Իսկ կրավորական նախադասության մեջ այն անանցողականության ցուցիչն է, որը քողարկված միջին *sich* դերանունն է և անուղղակի ձևով վերաբերում է տրամաբանական ենթակային՝ ներգործական նախադասության գործող անձին:

Վերը նշված տեսությունները բխում են Պլանկի վերլուծությունից, ըստ որի անդրադարձ կրավորականի անդրադարձ դերանունը համարվում է որպես ապանցողականության ցուցիչ:

Ըստ գերմանագետ Պլանկի հարակրկնական անդրադարձ դերանունը փոխակերպման ժամանակ անցում է կատարում բառայինի, ինչպես *sich aneignen*, *sich einer Sache / Aufgabe entledigen* բայերի դեպքում⁸:

Այսպիսով՝ ելնելով վերը նշված գաղափարից, փաստում ենք, որ հարակրկնական անդրադարձ դերանունը ներգործական կառույցում միտում ունի դառնալու բառային: Այլ կերպ ասած՝ բանի որ հայցական հոլովով խնդրի տեղն արդեն զբաղեցված է անդրադարձ դերանվան կողմից, վերջինիս անցումը բառայինի շատ հավանական է:

Ամփոփելով միջին *sich* դերանվան և անդրադարձ դերանվան առանձնահատկությունները՝ նշենք, որ անդրադարձ դերանվամբ կառույցները իրականում անցողական են, իսկ միջին *sich* —ով կառույցները՝ անանցողական:

Ըստ Ազելի այս երկու տարբեր դերանունների միջև գոյություն ունի կրավորականության սահմանազատում. «Միջին բայերը, որոնք հակված են անանցողական լինելու, հիմնականում ունակ են կազմելու կրավորական: Ի տարբերություն միջին բայերի անդրադարձ բայերը, որոնք միտված են անցողականության, որպես կանոն չեն կարող կազմել կրավորական»:

Իմաստի տեսանկյունից նշենք, որ անդրադարձ կրավորականն իր կառույցներում հանդես եկող բայերի նկատմամբ ունի որոշակի իմաստաբանական առանձնահատկություններ. միայն որոշակի բայերն են ունակ կազմելու անդրադարձ կրավորական, այդ պատճառով առաջին նախապայմանն է, որ բայը պիտի լինի հարակրկնական կամ բառային *sich* դերանվամբ:

Միջին *sich* դերանվամբ բայերով չենք կարող կազմել կրավորական: Այս պնդումը բխում է միջին դերանվամբ բնորոշ սահմանումից, բանի որ երկու կառույցներում էլ ենթական իմաստային տեսանկյունից գործողության խնդիրն է, իսկ ահա միջին *sich* —ը այստեղ մատնանշում է կրավորականին հատուկ իմաստ: Վերը քննարկված յուրահատկությունները բնորոշ են ինչպես միջին կառույցներին. (18) *Der Koffer trägt sich schwer*, այնպես էլ՝ միջին բայերին. (19) *Der Draht biegt sich*.

Ստորև բերված օրինակներում տրաբանական ենթակայի ներքո հանդես է գալիս ուղիղ խնդիրը: Հմմտ.

⁸ Plank, F.: Peculiarities of Passives of Reflexives in German. In *Language*, 17–1, 1993, S. 135–167.

⁹ Agel V. Նշվ. աշխ.:

(19) *X trägt den Koffer leicht.* → *Der Koffer trägt sich leicht.* (Միջին կառույց)

(20) *X biegt den Draht.* → *Der Draht biegt sich.* (Միջին բայ)

(21) *X öffnet die Tür.* → *Die Tür öffnet sich.* (Միջին բայ)

Հետևյալ հարասույթներն արտահայտում են կրավորական իմաստ.

(22) *Der Koffer kann nur schwer getragen werden.* / *Es ist schwer, den Koffer zu tragen.*

(23) *Der Draht wird von jemandem / von etwas gebogen.*

(24) *Die Tür wird von jemandem geöffnet.*

Քանի որ բերված նախադասություններում կրավորականին բնորոշ երևույթը՝ ենթակայի իմաստի սթագնումը, այլևս հնարավոր չէ, այդ պատճառով դրանք համարվում են քերականորեն սխալ.

(25) **Es trägt sich leicht.* (expletiv es)

(26) **Es biegt sich.* (expletiv es)

(27) **Es wird sich geöffnet.* (expletiv es)

Այնուամենայնիվ հստակ չի կարելի ասել, որ հարակրկնական կամ բառային *sich* անդրադարձ դերանվամբ բայերը ունակ են կազմելու անդրադարձ կրավորական: Որպես հաջորդ նախադրյալ հիմք է հանդիսանում այն համգամանքը, որ բոլոր նշված բայերը պիտի համատեքստում ներառված տրամաբանական ենթակա ունենան, որն էլ արտահայտված լինի անձով: Գերմաներենում, սակայն, այս երևույթը հատուկ չէ բառային անդրադարձ դերանվամբ բայերին, այսինքն՝ անտրոհելի *sich*-ով բայերին, ինչպես, օրինակ՝ *sich gehören, sich ziemen, sich bewölken, sich ereignen, sich handeln um, sich ergeben, sich legen*. Հմմտ.

(28) **Es / Hier wird sich gehört.*

(29) **Es / Hier wird sichgeziemt.*

(30) **Es / Hier wird sich bewölkt.*

(31) **Es / Hier wird sich ereignet.*

(32) **Es / Hier wird sich um eine Frage gehandelt.*

(33) **Es / Hier wird sich die Lösung ergeben.*

(34) **Es / Hier wird sich gelegt.* (Aktiv: *Der Sturm legt sich*):

Ըստ այդմ եզրակացնում ենք, որ այն անդրադարձ բայերով միայն կարելի է կազմել անդրադարձ կրավորական նախադասություն, որտեղ ենթական անձով է արտահայտված ((35) *Hier wird sich geöffnet.* (36) *Hier wird sich schön getanzt*).

Գրականություն

1. Գաբրիելյան Յու., Գերմաներեն լեզվի տիպաբանություն, Երևան, 2006, էջ 80:
2. Agel, V.: Reflexiv-Passiv, das im Deutschen keines ist. Überlegungen zu Reflexivität, Medialität, Passiv und Subjekt. In: Dürscheid, Christa: Sprache im Fokus, Tübingen, 1997 S. 147
3. Eisenberg P.: Grundriß der deutschen Grammatik, Band 2: der Satz, Stuttgart/ Weimar 19, S. 123-130:
4. Kunze J.: Typen der reflexiven Verbverwendung. In: Zeitschrift für Sprachwissenschaft 16, 1997, S. 83
5. Plank F.: Peculiarities of Passives of Reflexives in German. In: Studies in Language 17-1, 1993, S. 135-167:

Ա. ԱՐԱԲՅԱՆ

СИНТАКСИЧЕСКИЕ И СЕМАНТИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ВОЗВРАТНОГО ПАССИВА И МЕДИОПАССИВА В СОВРЕМЕННОМ НЕМЕЦКОМ ЯЗЫКЕ

Возвратный пассив составляется также как и безличный пассив непереходных глаголов (от неотделимых возвратных глаголов — без синтаксического анализа, а от анафорических возвратных глаголов с прямым дополнением в винительном падеже — с семантическим анализом). У неотделимых возвратных глаголов, как например *sich schämen*, возвратное местоимение является частью глагола и этим самым уже является прямым дополнением. Именно поэтому от таких глаголов возможно составление всех тех семантических структур, которые составляются от непереходных глаголов, в том числе и безличные пассивные структуры, такие как возвратный пассив: *Es wird + sich + Gen. /Dat. /Präp. Obj. /Adj. + Partizip II*.

A. ARABYAN

REFLEXIVE PASSIVE AND MEDIO PASSIVE IN MODERN GERMAN: BASIC SYNTACTICAL AND SEMANTICAL PECULIARITIES

The reflexive passive is formed in the same way as the impersonal passive by intransitive verbs (from the inseparable reflexive verbs — without a syntactical analysis whereas from anaphorical reflexive verbs with a direct object in the objective case — with a semantic analysis.)

The reflexive verbs of the *sich schämen* type have a reflexive pronoun as their part, which is a direct object; therefore verbs belonging to this class generate different semantic structures from intransitive verbs, including impersonal passive structures such as the reflexive passive: *Es wird + sich + Gen. /Dat. /Präp. Obj. /Adj. + Partizip II*.